

ՏԱՐԵԼԻՑ

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՇԵՏՈՐՅԱ ԴԱՏԵՐԱԶՄԻ ԴԺՈՒՔԸ



Օգոստոսյան պատերազմին, ռուսական կողմի ներխուժման արդյունքում, զոհվեց Վրաստանի 228 խաղաղ քաղաքացի, 170 զինծառայող, 14 ոստիկան: Անհայտ կորած է գրանցվել 8 զինծառայող: Հարազատ վայրերից պատերազմի հետևանքով հեռացել է 150 հազար մարդ: Այսօրվա դրությամբ, փախստականի կարգավիճակում շարունակում է մնալ շուրջ 30 հազարը:

Ինը տարի է անցել՝ ռուս-վրացական 2008 թվականի օգոստոսյան պատերազմից: Տարեկիցի կապակցությամբ՝ Վրաստանի պետական գերատեսչություններում դրոշներն իջեցվեցին, Վրաստանի բոլոր եկեղեցիներում, ի հիշատակ պատերազմի զոհերի, մատուցվեցին հոգեհանգստի պատարագներ: Օրվա առթիվ Թբիլիսիի Մուխամբաթվերդիի գերազմանատուն՝ օգոստոսյան պատերազմում զոհվածների հուշահամալիր, այցելեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, երկրի գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների, քաղաքական կուսակցությունների և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Իսկ իրավիճակի սրումը վավերացվեց օգոստոսյան մարտական գործողություններից շատ առաջ: Դեռևս մայիսի 31-ին, Ռուսաստանը, մինչև Ինգուրի գետը, երկաթուղու հաղորդակցության վերականգնման պատրվակով, Աբխազիայի դե-ֆակտո հանրապետություն մտցրեց երկաթուղային գործեր և վերականգնման աշխատանքներն ավարտեցին ծրագրվածից մեկ ամիս շուտ, օգոստոսյան դիմակայության տարեկիցից մեկ շաբաթ շուտ:

Սրվեց իրավիճակը նաև Ցխինվալիի տարածաշրջանում: Վրացական գյուղերը գրեթե ամեն օր ռմբակոծվում էին: Օգոստոսի 8-ին, մոտավորապես ժամը 00.30-ին, Վրաստանի իշխանությունն ընդունեց որոշում՝ վրաց-օսական դիմակայության գո-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ԴԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԽԱԽՏՄԱՍԲ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ «ԱՅՑԸ» ԲՈՒՆԱԶԱՎԹՎԱԾ ԱԲԽԱԶԻԱ

«Օգոստոսյան պատերազմի իններորդ տարեկիցին՝ մեծան հիմնի վարքը ծառայում է Ռուսաստանի կողմից ռազմական ագրեսիայի, էթնիկական զտման և բռնազավթման ուղիով ինքնիշխան պետության սահմանների բռնի փոփոխման օրինականմանը»,- ասված է Վրաստանի արտաքին գործերի նախարարության՝ բռնազավթված Աբխազիա Ռուսաստանի նախագահի այցի կապակցությամբ տարածած հայտարարության մեջ:

ԱԳ նախարարության հայտարարության մեջ նշված է, որ Պուտինի «այցը» բռնազավթող երկրի նպատակային քաղաքականության շարունակությունն է:

«2008 թվականին Վրաստանի վրա լայնամասշտաբ ռազմական ինտերվենցիայի իրագործման օրը Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի բռնազավթված Աբխազիայի երկրամաս «այցը» իրենից ներկայացնում է Վրաստանի դեմ Մոսկվայի նպատակային քաղաքականության շարունակություն:

Օգոստոսյան պատերազմի իններորդ տարեդարձի օրը իրագործած մեծան հիմնի վար-

վեցողությամբ Կրեմլը ապարդյուն փորձում է օրինականացնել իր բռնազավթման վարչակազմը»:

«Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը բողոքարկում է՝ Վրաստանի պետական սահմանի խախտմանը Ռուսաստանի նախագահի «այցը» բռնազավթված Աբխազիայի երկրամաս, ինչը կոպիտ ոտնահարում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները»:

Արտաքին գործերի նախարարությունը Ռուսաստանի Դաշնությանը կոչ է անում դադարեցնել (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ԾՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՄԱՍՇՏԱԲԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ

Օգոստոսի 10-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Խոսելով առաջիկա ծրագրերի մասին, երկրի վարչապետը հայտարարեց, որ Վրաստանի կառավարությունը 2018 թվականի համար ծրագրում է աննախադեպ մասշտաբների ենթակառուցային նախագծեր: «Կարծում եմ, կունենանք աննախադեպ մասշտաբների ենթակառուցային աշխատանքներ: Այս տարի մեր բյուջեում կապիտալ ծախսերն ավելացել են 30 տոկոսով: Հաջորդ տարվանից մենք ծրագրում ենք շատ ավելի մեծ մասշտաբներ: Ներկա



դրությամբ, շատ նախագծեր մշակման փուլում են: Ենթադրաբար, 2018 թվականի երկրորդ եռամսյակից, մենք կունենանք երկրի համար աննախադեպ մասշտաբներ: Սա քաղաքական հայտա-

րարություն է, սա իրականություն է, որը մենք ծրագրում ենք և, կարծում եմ, ենթակառուցային այդ աշխատանքների կառուցումը երկիրը նկատելիորեն կփոխվի»,- հայտարարեց վարչապետը:

ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ՕՁԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՆՈՐ ԷՅ՝ ՀԱՅՎՐԱՅԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԵՐԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ



2017 թվականի օգոստոսի 5-ին, Հովհաննես Թումանյանի թբիլիսյան վերջին բնակարանում՝ Անադլեբա փողոցի թիվ 18 տանը, կայացավ «Հովհաննես Թումանյանի տուն» գիտական, մշակութային կենտրոնի բացումը՝ նոր էջ դառնալով հայ-վրացական մշակութային կապերի տարեգրությունում:

Հիրավի, պատմական այս իրադարձության հենքը, 100-ամյա վաղեմության Մեծն Թումանյանի տան թբիլիսահայ համայնքին վերադարձն էր, որտեղ

ժամանակին սիրով հյուրընկալվել են Աղայանն ու Կոմիտասը, Շիրվանզադեն, Իսահակյանը, Փափագյանը, Մառը, Իսախանյանը, Տաբիբեն, Գրիշաշվիլին, Բրյուսովը և ուրիշներ, որտեղ կազմակերպվել են գրական գրույցներ, ընթերցումներ, ասուլիսներ, տպագրված և անտիպ երկերի քննարկումներ, ուսումնասիրվել են հայ, վրաց և համաշխարհային գրականության նմուշներ:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԿԱԳՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՒՆ ԵՎ ՌԱՃԱ-ԼԵՉԽՈՒՄԻ-ՔՎԵՍՈՍ ՍՎԱՆԵԹԻՆ ԿՈՒՆԵՆԱՆ ՆՈՐ ՆԱՀԱՆԳՊԵՏԵՐ

Տարածված տեղեկատվության համաձայն, Գուրիայի երկրամասում պետական լիազոր-նահանգապետ Գիա Սալուբլաձեն պաշտոնաթող է եղել: Ըստ տեղեկատվության, նահանգապետի պաշտոնում նշանակվելու է Մերաբ Գանուկվաձեն:

Տարածված տեղեկատվության համաձայն, զբաղեցրած պաշտոնից ազատվում է նաև Ռաճա-Լեչխումի-Քվեմո Սվանեթի երկրամասի նահանգապետ Պապուկ Մարգվելաձեն: Նրա փոխարինողի մասին դեռևս տեղեկատվություն չկա:

Ավելացնենք, որ 2014 թվականից հետո Վրաստանի գրեթե բոլոր երկրամասերում նահանգապետերը փոխվեցին: Այդ առումով բացառություն է կազմում Սամցխե-Ջավախեթի երկրամասի նահանգապետ Ակակի Մաճուտաձեն, որն բավականին հաջողությամբ կատարում է իր պարտականությունները:

ՊԵՏԱԿԱՆ ԼԵՁՈՒ

ՈՂԶՈՒՆԵԼԻ ՆԱԽԱՁԵՐՆՈՒԹՅՈՒՆ ԱՆԱԼՔԱԼՔԻՈՒՄ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՑՎԵԼ ԵՆ ՎՐԱՑԵՐԵՆ ԼԵՁՎԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԵՆԹԱՑՆԵՐ

Ազգային փոքրամասնության ներկայացուցիչ հանդիսացող չափահաս բնակիչների շրջանում Վրաստանի պետական լեզվի ուսուցումը մեծ ժողովրդականություն է ստանում: Նրանք մշտապես միտված են սովորելու պետական լեզուն: Ախալքալաքիում Հայ Առաքելական Ուղղափառ եկեղեցու վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախեթի առաջնորդական փոխանորդությունում, Ջուրաբ ժվանիայի անվան պետական վարչարարական դպրոցի արջակցությամբ, սկսվեցին վրացերենի ուսուցման դասընթացներ: Նախաձեռնությունը առաջնորդական փոխանորդությանն է, իսկ վրացերեն լեզուն ուսուցանվում է անվճար:

Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախեթի առաջնորդական փոխանորդության նախաձեռնությամբ, պետական լեզվի ուսուցման ծրագրի շրջանակներում, ձեռնարկվեց խումբ, որտեղ համայնքի հոգեւոր ան-

ծինք էլ նրանց ընտանիքի անդամները սովորում են պետական լեզուն, ինչը նշանակալիորեն կնպաստի նրանց ինտեգրմանը ներպետական տարածքում:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՆԵՔՈՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԺՈՒՔԸ


(Սկիզբը՝ 1-ին էջում)

տում սահմանադրական կարգուկանոնի վերականգնման մասին:

Վրաստանի զինված ուժերը հակադրվեցին անջատողական Ցխինվալիի գործադիր ղեկավարի և ռուսական բանակին: Ռոքիթի թունելի անցմամբ եւ Փտուրի սահմանից Վրաստանի տարածք մուտք գործեցին շուրջ 15 հազար զինծառայող: Վրաց գործադիր ղեկավարները գրավեցին Ցխինվալի, թեպետ, ռուսական ավիացիայի հարձակումներից հետո, նահանջեցին: Ռուսական ավիացիան հարձա-

կումներ գործեց նաեւ Վրաստանի տարբեր քաղաքներում տեղակայված ռազմական կայանների ու օդանավակայանների վրա: Երկու անգամ ռմբակոծեցին Գորին, այդ թվում՝ ռազմական տարածքը: Ռուսական ավիացիան ռմբակոծեց նաեւ Թբիլիսիի մոտակայքի՝ Վազիանի ռազմական կայանը, ավիացիոն գործարանը, ավազաբլրի վրա գտնվող ռադարը: Ռմբակոծեցին Փոթիի նավահանգիստը, Սենակիի ու Մառնեուլիի ռազմական կայանները: Ռուսաստանի 58-րդ բանակը, Ցխինվալիի եւ Սուխումիի վարչակազմերի կողմից վերահսկվող տարածքներից բացի, գրավե-

ց Ախալգորիի շրջանը, Վերին Աբխազիան, Ջուզգիդին, Գորիի շրջանի մի քանի գյուղեր, Սախներեի շրջանի Պերելի գյուղը: Մարտական ակտիվ գործողությունները դադարեցվեցին Ֆրանսիայի նախագահ Նիկոլայ Սարկոզիի միջամտությունից հետո: Սարկոզին՝ օգոստոսի 12-ին, վեց կետից բաղկացած խաղաղարար ծրագիրը նախ՝ ներկայացրեց Մոսկվային, ապա՝ Թբիլիսիին: Իսկ սեպտեմբերի 8-ին այն ժամանակվա նախագահներ Դմիտրի Մեդվեդեւը եւ Միխեիլ Սաակաշվիլին հստակեցրին խաղաղարար ծրագրի առանձին մանրամասներ:



ՎԱՏԻՎԱՆ

ՀՈՒՍԻ ՊԱՊԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՐՈՒԹԵԼՈՒ ՀՈՐԴՈՐԱՆՔԸ

Ֆրանցիսկոս պապը հորդորել է տարբեր պաշտամունքների ծառայողներին «աղոթել եւ համագործակցել հանուն խաղաղության, վերականգնելով ներդաշնակությունը աշխարհի՝ պատերազմից ու ահաբեկչությունից ծվատված շատ մասերում»,- Սուրբ աթոռի մամուլի ծառայությունը մեջբերում է ուղերձը, որով քահանայապետը դիմել է Կոն Սորիկավեին՝ Տենդայ ճապոնական բուդդայական դպրոցի գերագույն հոգեւորականին:

Փաստաթուղթը նվիրված է խաղաղության համար աղոթքի միջկրոնական 30-րդ հանդիպմանը, որն ընթանում է Ճապոնիայի Կիոտո քաղաքի Հիոգո լեռան տաճարում՝ ԱՄՆ-ի կողմից Հիոտոյի մայր եւ Նագասակիի միջուկային ռմբակոծման տարելիցի կապակցությամբ: Մեկնաբանները հիշեցնում են, որ առաջին անգամ խաղաղության համար աղոթքի միջկրոնական հանդիպումը Հիոգո լեռան վրա կայացել է 1987 թվականի օգոստոսին. դրա համար ոգեշնչման օրինակ է դարձել խաղաղության համար աղոթքի համաշխարհային օրը, որն անցկացվել է 1986 թվականի հոկտեմբերի 27-ին, Իտալիայի Ասիզի սրբազան քաղաքում:

ՌԻԿՐԱԿՆԱ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱՅԱՆՈՒՄՆԵՐԻ

ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ ԶԵՂԱՐԿԿԵԼ Է

Ուկրաինայի նախարարների կաբինետը որոշում է ընդունել դադարեցնել, Ռուսաստանի հետ երրորդ երկրներ ռազմական նշանակության արտադրանք արտահանելիս փոխգործակցության մասին, համաձայնագրի գործողությունը: Առանց քննարկման, այլ որոշումների հետ փաթեթում այդ վճռի ընդունման մասին հայտարարել է վարչապետ Վլադիմիր Գրոյսմանը: Արտասահմանին ռազմական արտադրանք մատակարարելիս՝ Ռուսաստանի եւ Ուկրաինայի փոխգործակցության միջկառավարական համաձայնագիրը ստորագրվել է 2003 թվականի ամռանը եւ ուժի մեջ է մտել 2004 թվականին: Փաստաթուղթը, մասնավորապես, նախատեսում էր այն ռազմական արտադրանքի ցանկի կազմում, որի արտահանումը պահանջում է կողմերի համաձայնություն, անհրաժեշտության դեպքում նախնական կոնսուլտացիաների անցկացում երրորդ երկրներ ռազմական արտադրանքի վաճառքի կամ հանձնման պարտավորություն ռազմական տեխնիկայի նորոգման բնագավառում՝ արտասահմանին մատակարարումների համար:

Նշենք, որ 2014 թվականի հունիսին նախագահ Պյոտր Պորոշենկոն արգելել է Մոսկվայի հետ ցանկացած ռազմատեխնիկական համագործակցություն:

ՀԻՆԱՍՏԱՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺ ՍԱՐԳՎԱՅԻՆ ՋՈՂԵՐՈՎ

Հինաստանի Սիջուան հարավ-արեւմտյան նահանգում, օգոստոսի 8-ին, տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից 20 մարդ զոհվել է, իսկ տուժածների թիվը հասել է 431-ի: Երկրաշարժը տեղի է ունեցել Սիջուանի նահանգի Նգավա-Տիբեթա-Ցյանի ինքնավար շրջանի Ցյուլեժայգոու գավառում: Հինաստանի սեյսմոլոգիական կենտրոնը հայտնել է, որ երկրաշարժի մագնիտուդը կազմել է 7: Ըստ վերջին տվյալների, երկրաշարժից հետո գրանցվել է գրեթե 1700 հետնցում:

ԴԻՄԱՎԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի պետության դեմ սադրիչ գործողությունները եւ հարգալից վերաբերվել ինքնիշխան պետության տարած-

քային ամբողջականությանը: Արտաքին գործերի նախարարությունը դիմում է նաեւ միջազգային հանրությանը՝ համապատասխան գնահատական տալ Մոսկվայի ազ-

րեսիվ քայլերին եւ գործուն միջոցներ ընդունել, որպեսզի Ռուսաստանի Դաշնությունը կատարի ստանձնած միջազգային պարտավորությունները, այդ թվում՝ 2008 թվակա-

նի օգոստոսի 12-ի իրադարձրի մասին համաձայնագիրը»,- նշված է Վրաստանի արտաքին գործերի նախարարության կողմից տարածած հայտարարությունում:

ՊՈՒՏԻՆԸ ՅՈՒՐՈՎԻ Է «ԵՐԱՇՆԱՎՈՐՈՒՄ» ԱՐԽԱԶԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Աբխազիա կատարած «այցի» շրջանակներում՝ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, ինքնահռչակ հանրապետության նախագահ Ռաուլ Հաջիմբայի հետ հանդիպմանը, հայտարարեց, որ Ռուսաստանը մտադիր է հետագայում եւս ապահովել Աբխազիայի Հանրապետության անվտանգությունը ու անկախությունը:

- Սենք խոսելու թեմաներ ունենք, սակայն անենակարելի է այն է, որ մենք Աբխազիայի հետ շատ առանձնահատուկ հարաբերություններ ունենք: Սենք վստահ կերպով ապահովում ենք Աբխազիայի անվտանգությունը, անկա-

խությունը ու ինքնուրույնությունը: Համոզված եմ, որ այդպես կլինի նաեւ հետագայում,- ասաց Պուտինը: Սակայն հատկանշական է, որ, անվտանգության մասին խոսելիս, ՌԴ նախագահը նկատի ուներ ոչ միայն Աբ-

խազիայի պաշտպանությունը, այլեւ՝ իր երկրի քաղաքացիներին, ռուս զբոսաշրջիկներին աբխազ քրեականներից պաշտպանությունը: Քանի որ, վերջին ժամանակներում Աբխազիայում այնքան է ավելացել ռուս զբոսաշրջիկների նկատմամբ անբարյացակամ վերաբերմունքն ու ավազակային հարձակումները, որ պետության ղեկավարն անգամ չկարողացավ խուսափել այդ թեմայի ընդգծումից:

ՆԱՏՕ. «ԱՌԱՆՑ ԹԲԻԼԻՍԻ ԶԵՏ ՀԱՄԱԶԱՅՆԵՑՄԱՆ՝ ԱՐԽԱԶԻԱ ԱՅՅԵԼԵՆ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է»

Միջազգային հանրությունը լուրջ մտահոգություն հայտնեց Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի՝ բռնազավթված Աբխազիա կատարած այցը:

Տարածված հաղորդագրություններում նշվում է, որ ՌԴ նախագահի կանխամտածված իր արդեն թվով երրորդ այցելությունը Աբխազիա իրականացնելից օգոստոսին՝ ռուս-վրացական պատերազմի ամսին, թեպետ նշվում է նաեւ, որ ներկայիս այցը իրականացվեց՝ ի պատասխան Վրաստան ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսի այցելության ու՝ Վրաստանում ՆԱՏՕ-ի «Արժանի գործընկեր» գորավարժությունների:

Եւ գտնում է, որ այդ այցը խաթարում է տարածաշրջանում հակամարտությունը կարգավորելու միջազգային ջանքերը: Այդ մասին հայտարարել է դաշինքի ներկայացուցիչ Դիլան Ուայթը:

- Նախագահ Պուտինի այցը՝ հակամարտության 9-րդ տարելիցին, խաթարում է՝ բանակցությունների միջոցով տարածաշրջանում խաղաղ կարգավորման հասնելու միջազգային ջանքերը: Սենք ցավում ենք, որ այդ այցը տեղի է ունեցել՝ առանց Վրաստանի իշխանությունների հետ նախնական համաձայնության, - ասաց նա:

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՈՐԱԿԵԼ ԵՆ «ՆՅԱՐԴԱՅԻՆ»

Վրաստանի արձագանքը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի Աբխազիա կատարած այցի հանդեպ՝ Աբխազիայի արտաքին գործերի նախարարությունը «նյարդային» է որակել: Տարածած հաղորդագրության մեջ նշված է. «Չնայած Վրաստանի քաղաքական ղեկավարության, ինչպես նաեւ նրանց արեւմտյան հովանավորների՝ ԱՄՆ-ի, ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի բավական «նյարդային» արձագանքին՝ Վլադիմիր Պուտինի այցի հանդեպ, ցանկանում ենք հավաստիացնել, որ այցը հաջողված էր»:

Աբխազիայի ԱԳՆ վստահեցրել է նաեւ, որ ռուս-աբխազական հարաբերությունները ռազմավարական են ու դինամիկ զարգացում ունեն:

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՑԱԾ Մ.ՍԱՎԱՇՎԻԼՈՒ ՀՐԶԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոյի հուլիսի 26-ի իրամամագրով, Վրաստանի նախկին նախագահ եւ Օդեսայի մարզի նախկին նահանգապետ Միխեիլ Սաակաշվիլին գրվել է Ուկրաինայի քաղաքացիությունից:

Ուկրաինայի նախագահի իրամամագրի իրապարակման ժամանակ՝ Միխեիլ Սաակաշվիլին գտնվում էր ԱՄՆ-ում: Թեպետ, ինչպես պարզվեց, դրանից հետո նա, փաստորեն, առանց անձնագրի կարողացավ ԱՄՆ-ից մեկնել Լեհաստան, մասնակցել 1945 թվականի Վարշավայի ապստամբության հերթական տարելիցի միջոցառումներին, այնտեղից ուղեւորվել Լիտվա,

ապա՝ Հունգարիա: Ընդ որում, Լիտվան, հանձինս արտագործադատարար Լինաս Լինկայաչուսի, հորդորել է Ուկրաինային՝ հնարավորություն տալ Վրաստանի նախկին նախագահ, Օդեսայի նախկին նահանգապետ Միխեիլ Սաակաշվիլին դատական կարգով պաշտպանել Ուկրաինայի քաղաքացիության իրավունքը: Լինաս Լինկայաչուսը հավաստիացրեց, որ Լիտվան այսուհետ մտադիր

է աջակցել Ուկրաինային, սակայն, միաժամանակ, պահանջելու է չսահմանափակել ընդդիմության իրավունքները:

Ավելի վաղ՝ հայտնի դարձավ, որ Եվրախորհրդարանի լիտվացի պատգամավոր Պյատրաս Աուշտրալիչուսն առաջարկել է Սաակաշվիլին տրամադրել Լիտվայի քաղաքացիություն: Նրա կարծիքով՝ Վրաստանի նախկին նախագահը կարող է Լիտվայում զբաղվել քաղաքական գործունեությամբ:

Իր հերթին, Միխեիլ Սաակաշվիլին հայտարարեց, որ չի փորձելու Ուկրաինա վերադառնալ անօրինակա-

նորեն. «Ես միշտ չեմ որ, հարմարավետությամբ եմ ճանապարհորդում: Բայց բեռնախցիկում ուղեւորությունը՝ ճանապարհորդելու իմ սիրած ձևերի թվում չեմ»,- ասաց նա եւ հավելեց, որ մտադիր է սահմանը հատել օրինականորեն:

- Ես ուսումնասիրում եմ օրենսդրական բազան եւ կմեկնեմ այնտեղ (Ուկրաինա), երբ պատրաստ լինեմ: Իշխանությունը չի կարող անտեսել միլիոնավոր ուկրաինացիների կարծիքը,- հայտարարեց Սաակաշվիլին՝ վստահություն հայտնելով, որ Ուկրաինայի բնակիչներն իրեն աջակցում են:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՈԼՈՐՏ


ԱՆՅՎԱՅՎԵՅ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳՐԻ ԸՆՈՐՀԱՆԳԵՍԸ

Օգոստոսի 9-ին, Ախալցխայի մարզում անցկացվեց պետական նոր ծրագրի շնորհանդեսը:

Պետության տնօրինության ներքո գտնվող արտավայրերի իրատեսական օգտագործման ծրագիրը տեղացիներին ներկայացրեց գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալության նախագահ Գիորգի Միշելաձեն:

Նոր ծրագրի շրջանակներում նախատեսվում է պետական արտավայրերի արդյունավետ օգտագործում: Այդ նպատակով, գյուղատնտեսական կոոպերատիվները, որոնք կազմված են առնվազն 11 բաժնետերերից եւ ունեն սեփականության ներքո առնվազն 200 գլուխ անասուն, կարող են վարձակալել խոտհարքեր եւ արտավայրեր, ինչպես նաեւ՝ համապատասխան տեխնիկա՝ տրակտորներ, հնձիչներ եւ այլն:

Վերոնշյալ պետական ծրագիրը ներառում է 29 մունիցիպալիտետներ, որոնք ունեն բարձրալեռ երկրամասերի կարգավիճակ: Յուրաքանչյուր մունիցիպալիտետում կբավարարվի մեկ հայց:



ԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԴԻՄԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

Վրաստանի ժողովրդական պաշտպանին առընթեր կրոնական խորհրդի անդամները, այդ թվում եւ Հայ Առաքելական Ուղղափառ եկեղեցու Վիրահայոց թեմը, արձագանքեցին Վրաստանի սահմանադրական փոփոխությունների նախագծում նախատեսված այն հիմնադրույթներին, որոնք առնչվում են կրոնի, խղճի եւ դավանանքի ազատությանն ու դրանց սահմանափակմանը:

Ինչպես նշված է կրոնական խորհրդի կողմից տարածված հայտարարության մեջ, խորհուրդը խորհրդարանին կոչ է անում թույլ չտալ մարդու իրավունքների պաշտպանության չափորոշիչների թուլացում եւ չիրականացնել քայլեր՝ ժողովրդավարական պետության նշանակալից անկումաքարերից մեկի, կրոնական ազատության սահմանափակման ուղղությամբ:

ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ՏԱՊԱԼՎԵՑ

Վրաստանի առաջատար ընդդիմադիր կուսակցությունները հրաժարվեցին առաջիկա տեղական ընտրություններում թեմիսի քաղաքապետի միասնական թեկնածուի առաջադրման առաջարկությունից: Նշենք, որ նման նախաձեռնությամբ հանդես են եկել «Նոր Վրաստան» կուսակցության լիդեր Գիորգի Վաշաձեն: Նրա ընտրությունների նախօրեին միավորվելու եւ քաղաքապետի թեկնածուի ընտրության համար պայմանագր անցկացնելու մասին առաջարկությունը պաշտպանեցին երեք՝ «Եվրոպական ժողովրդավարներ», «Նոր միավորում» Վրաստանի համար» եւ «Ազատության համար քաղաքացիական ալյանս» կուսակցությունները:

ՀՐԴԵՂ ՄԹԱԾՄԻՆԴԱ ԼԵՈՒՆ ՎՐԱ

Վրաստանի մայրաքաղաքի Ֆունիկուլորի գրասպաս, Մթածմինդա լեռան ստորոտում հրդեհի մասին առաջին հաղորդումները սոցիալական ցանցերում սկսել էին տարածվել օգոստոսի 8-ի ուշ երեկոյան: Լեռան լանջերից մեկում՝ անտառում, կրակ էր հայտնվել, որն սկսել էր արագորեն տարածվել եւ՝ կարճ ժամանակում ընդգրկել լեռնալանջի զգալի տարածություն, մոտենալով գրասպասին: Բռնկման օջախների վերացման համար նետվել էին հրշեջ-փրկարարական ծառայության ուժեր: Տասնյակ անձնակազմեր եւ շուրջ 100 հրշեջներ են մասնակցել հրդեհի մարմանը: Նրանց հաջողվել է մի քանի ժամում տեղափակել հրդեհը:

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին օպերատիվ գործողության համար հրշեջներին ու փրկարարներին իր շնորհակալությունն հայտնեց:

ՏԱՐԱԴԱՄԻ ՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (11 օգոստոսի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Table with 3 columns: Currency, Buy rate, Sell rate. Rows include USD, EUR, RUB, GEL.

Օգոստոսի 4-ի համեմատ, դոլարի կուրսը մնացել է անփոփոխ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԴԱԿԻԹ ՍԵՐԳԵՆԿՈՆ. «ԱՌԱՆՁԻՆ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԳՆԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ»



Ինչպես հայտարարեց Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգենկոն, մի շարք դեղորայքների գներն ավելացել են, իսկ որոշ դեղորայքների գները՝ նվազել, տարվա ընթացքում դեղորայքի թանկացման որեւէ միտում չի վավերացվել:

պետական այն ծրագիրը, ըստ որի՝ քրոնիկական հիվանդություններ ունեցող 700 հազար մարդ ապահովվում է դեղորայքով: - Հուլիսին սկսված նախագիծը, ըստ որի, մենք տարածված քրոնիկական հիվանդություններ ունեցող 700 հազար քաղաքացու ապահովում ենք դեղորայքով, ընթացում է առանց խափանումների եւ, կարծում եմ, որ դա նշանակալի քայլ կլինի առողջապահության ոլորտի առջեւ ծառայած մարտահրավերների կարգավորման գործում,- հայտարարեց առողջապահության նախարարը:

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ԲԱՐՁՐԱԼԵՌԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՑ ԶԵՏՈ՝ ԳԱՂԹԸ ՆՎԱԶԵԼ Է

Ինչպես հայտարարեց բարձրալեռ տարածաշրջանների զարգացման ազգային խորհրդի քարտուղար Օթար Քոնջարիան, նրանից հետո, երբ ուժի մեջ մտավ բարձրալեռ տարածաշրջանների մասին օրենքը, այդ բնակավայրերից քաղաք բնակչության արտագաղթը զգալիորեն նվազել է:



Օթար Քոնջարիայի խոսքով, այսօրվա դրությամբ, բարձրալեռ բնակավայրերում գրանցված են ավելի քան 235 հազար մշտական բնակիչներ, ովքեր բարձրալեռ պայմաններում ապրում են տարեկան ինը եւ ավելի ամիսներ: - Բարձրալեռ տարածաշրջանների մասին օրենքն ընդունվել էր 2015 թվականին: Թեպետ, այդ օրենքով նախատեսված արտոնությունները իրականում սկսեցին գործել 2016 թվականի սեպտեմբերի 1-ից: Բնականաբար, անցած ընդամենը մեկ տարվա ընթացքում դժվար էր խոսել կոնկրետ արդյունքների մասին, սակայն որոշակի միտում արդեն նկատվել է: Այն, որ այսօր գրանցված ավելի քան 235 հազար մարդ ունեն բարձրալեռ երկրամասերի մշտական բնակչի կարգավիճակ, վկայությունն է նրա, որ բնակչության շահագրգռվածությունը եւ օրենքով սահմանված արտոնություններից օգտվելու ցանկությունը բարձր է: Դա նաեւ վկայությունն է նրա, որ բարձրալեռ տարածաշրջաններից գաղթի գործընթացը փոքրիշատե դադարեցվել է: Կարգավիճակի դադարեցման միակ պատճառը մարդու վախճանն է: Մենք չունենք տեղեկատվու-

թյուն, որ այդ կարգավիճակն ունեցող անձը թողել է բնակության վայրը եւ տեղափոխվել այլ բնակավայր, որը չունի նման կարգավիճակ: Թեպետ դա չի նշանակում, որ բարձրալեռ տարածաշրջաններից գաղթի գործընթացը լրիվությամբ դադարեցվել է,- հայտարարեց Օթար Քոնջարիան եւ հավելեց, որ, օրենքի գործարկումից հետո, բարձրալեռ տարածաշրջաններում գրանցվել է ավելի քան 200 արտադրություն, որոնք օգտվում են որոշակի հարկային արտոնություններից:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕՐԸ՝ ԱԲՈՒԼԻ ԳԱԳԱԹԻՆ


Օգոստոսի 7-ի լույս արեւածագը ախալքալաքցի, մինոմինդացի եւ ասախնձացի 40 ուխտավոր դիմավորեց Ջավախեթի ամենաբարձր Աբուլ լեռան գագաթին՝ ծածանելով վրացական դրոշմ ու հայկական եռագույնը: Քրիստոսի Պայծառակերպության տոնին նվիրված ուխտագնացության ամենակրտսեր մասնակիցը ինճանյա գումբուրդրոցի, մինչեւ 12 տարեկանների շրջանում Վրաստանի եւ Հայաստանի քինգդոքսինգի բազմակի չեմպիոն Արտյուշ Այվազյանն էր, ամենաավագը՝ ախալքալաքցի 61-ամյա խաչատուր Քեյանը:

Ախալքալաքցի նկարիչ, տեղի գեղարվեստական դպրոցի ուսուցիչ, Երեւանի գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ Հայկազուն Ղարազուլյանը, ով ուխտագնացության կազմակերպիչներից ու մասնակիցներից մեկն էր, «Վրաստան» թերթի խնդրանքով, պատմեց 3305 մետր բարձրությամբ Ջավախեթի բարձրագագաթ լեռան հաղթահարման մանրամասները:

- Ուխտագնացությանը մասնակցում էին 60 հոգի, նրանցից միայն 40-ին հաջողվեց բարձրանալ Աբուլ: Առաջին անգամ չէ, որ հաղթահարում են լեռան բարձրությունը, բայց այս անգամ պատասխանատվությունը մեծ էր ոչ միայն անձիս, այլեւ ընկերներին եւ աշակերտներին համար, քանի որ նախաձեռնությունն իմն էր: Լեռան լանջին էինք դեռնա մախրող օրվա մայրամուտին, ուր հաճույքով գիշերեցինք վրաններում, իսկ արդեն առավոտյան մեր դիմաց իր ողջ հնայրով փռվեց հրաշագեղ Փարվանան: Մեր սպասելիքները լիովին արդարացված էին: Մասնակիցները պարզապես ցնծում էին, նույնիսկ շուրջապար էին բռնել լեռան լանջին: Ոմանք թղթին էին հանձնում իրենց զգացածը, մյուսները՝ կտավին: Ուրախությամբ եւ երախտագիտությամբ նշեցին, որ ուխտագնացության մեկնարկից մինչեւ Աբուլ լեռան լանջ մեզ հետ էր Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Տաթև քահանա Մառությանը, ով արդեն լճափին, կրկին իր օրհնությունը բերելով դեպի գագաթ մղող մասնակիցներին, ներկայացրեց տոնի խորհուրդը, թե ինչպես Հիսուս իր երեք աշակերտների հետ լեռ բարձրացավ: Լիախույս եմ, որ հայրենի Ջավախեթի մեծ մասնակցները հաճախակի կդառնան ոչ միայն տեղացիների, այլեւ այլ բնակավայրերից ժամանած ուխտավորների համար,- ասաց Հայկազուն Ղարազուլյանը:



ԱԲՈՒԼԻ ԳԱԳԱԹԻՆ



ԱՐՏՅՈՒՇ ԱՅՎԱԶՅԱՆ

Քույրերից ու մասնակիցներից մեկն էր, «Վրաստան» թերթի խնդրանքով, պատմեց 3305 մետր բարձրությամբ Ջավախեթի բարձրագագաթ լեռան հաղթահարման մանրամասները: - Ուխտագնացությանը մասնակցում էին 60 հոգի, նրանցից միայն 40-ին հաջողվեց բարձրանալ Աբուլ: Առաջին անգամ չէ, որ հաղթահարում են լեռան բարձրությունը, բայց այս անգամ պատասխանատվությունը մեծ էր ոչ միայն անձիս, այլեւ ընկերներին եւ աշակերտներին համար, քանի որ նախաձեռնությունն իմն էր: Լեռան լանջին էինք դեռնա մախրող օրվա մայրամուտին, ուր հաճույքով գիշերեցինք վրաններում, իսկ արդեն առավոտյան մեր դիմաց իր ողջ հնայրով փռվեց հրաշագեղ Փարվանան: Մեր սպասելիքները լիովին արդարացված էին: Մասնակիցները պարզապես ցնծում էին, նույնիսկ շուրջապար էին բռնել լեռան լանջին: Ոմանք թղթին էին հանձնում իրենց զգացածը, մյուսները՝ կտավին: Ուրախությամբ եւ երախտագիտությամբ նշեցին, որ ուխտագնացության մեկնարկից մինչեւ Աբուլ լեռան լանջ մեզ հետ էր Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Տաթև քահանա Մառությանը, ով արդեն լճափին, կրկին իր օրհնությունը բերելով դեպի գագաթ մղող մասնակիցներին, ներկայացրեց տոնի խորհուրդը, թե ինչպես Հիսուս իր երեք աշակերտների հետ լեռ բարձրացավ: Լիախույս եմ, որ հայրենի Ջավախեթի մեծ մասնակցները հաճախակի կդառնան ոչ միայն տեղացիների, այլեւ այլ բնակավայրերից ժամանած ուխտավորների համար,- ասաց Հայկազուն Ղարազուլյանը:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍԱՆԱՋՅԱՆ



ԿՐԹԱԿԱՆ

ԻՆՉ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՄՊԱՍՎՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆԻՑ

Մեկ ամսից Վրաստանի դպրոցներում կսկսվի նոր ուսումնական տարին: AMBEBI.GE-ին հետաքրքրեց, թե դպրոցներին ի՞նչ նորություններ են սպասվում սեպտեմբերից: Այս և մյուս հարցերի շուրջ զրուցեցինք Կրթության և գիտության նախարարի տեղակալ Լիա Գիգաուրիի հետ:

- Կրթության և գիտության նախարարությունը դպրոցներին, վերջին մեկ տարվա ընթացքում, շատ նորություններ առաջարկեց: Հատուկ ուշադրություն դարձվեց դպրոցներում մի շարք ուղղությունների ուժեղացմանը՝ դպրոցական հետաքրքիր կյանքի, առողջ ապրելակերպի և առողջ սննդի աջակցություն, դպրոցի կառավարման և ուսուցչի մասնագիտական զարգացման նոր մոդել: և այլն:

- Դպրոցական հետաքրքիր կյանքի ուղղությամբ լայնածավալ նախաձեռնություններից է՝ դպրոցներում «ազատ դասերի» ներմուծման կենսագործումը: Այս դասաժամերը ծրագրվում են VII-VIII դասարանների աշակերտների հետաքրքրությունների հիման վրա: Այն իրենից ներկայացնում է արտադասարանական ոչ ֆորմալ ակտիվությունների փուլ, որի բովանդակությունն ու ուսուցման մեթոդաբանությունը տարբերվում է տիպիկ դասային գործընթացից: Ազատ դասերը լրիվությամբ ֆինանսավորվում են պետության կողմից: Ուզում են նշել, որ ներկայիս դրությամբ այդ դասերին ընդգրկված են 900 դպրոցի 45 հազարից ավելի աշակերտներ: Պահանջարկ 2000-ից ավելի դասող ներկայացրեց: Նախագծի ֆինանսավորումը կշարունակվի և ազատ դասերին ընդգրկված աշակերտների թիվը սեպտեմբերից կկրկնապատկվի: Անցյալ ուսումնական տարվա նշանակալից նորություններից էր առողջ ապրելակերպի մասնագիտացումը: Առաջին հերթին առանձնակի ուշադրություն դարձրեցինք սպորտային զվարճալի ակտիվություններին, այն է՝ ավելի կուժեղանա նոր ուսումնական տարվանից: Ծրագրի իրականացմանը, սպորտի ուսուցչների հետ զուգահեռաբար, ընդգրկվեցին նաև հատուկ վերապատրաստված մանդատորներ և, փաստորեն, յուրաքանչյուր շաբաթ 430 հանրային դպրոցի մինչև 5000 երեխա ներգրավված էին տարբեր ակտիվություններում: Այս ծրագիրը ավելի ակտիվացավ զարմանք, և կարելի է ասել, որ փորձարկումը հաջող էր: Սեպտեմբերից նշյալ ակտիվությունները Վրաստանի դպրոցներում բոլոր տարիքի աշակերտների համար հասանելի կլինեն:

Քանի որ սկսեցինք զրուցել առողջ ապրելակերպի թեմայով, պետք է անդրադառնանք երկրորդ ուղղությանը, որ պակաս կարելի է, մասնավորապես՝ դպրոցական առողջ սնունդը: Դպրոցական ճաշարանների նկատմամբ խստացվել են պահանջները: Ճաշարանները աշակերտներին պետք է առաջարկեն միայն առողջ սննդի ընտրացանկ: Այս ուղղությամբ մշտադիտարկումը (մոնիթորինգ) կսկսվի 2017 թվականի հոկտեմբերից դպրոցներում կսկսվի նոր ծրագիր՝ աշխատանքային հմտությունների զարգացման նախագիծ, որը կիրականացվի դպրոցի բազայի հիման վրա՝ մասնագիտական քոլեջների և դպրոցների համագործակցությամբ: Դա տարբեր մասնագիտական ուղղվածության թեմատիկ մոդուլների ուսուցում է՝ ըստ կոնկրետ դպրոցի պահանջարկի, կամ ժամանակակից աշխատանքի ուսուցման դաս: Դպրոցներում կստեղծվի նվազագույն բազա, որտեղ բազային աստիճանի աշակերտների համար, իրենց հետաքրքրող մասնագիտության շուրջ, հիմնական հմտություններ ձեռք բերելու համար գործնական դասեր կանցկացվեն: Մինչ այժմ դպրոցներն ու մասնագիտական հաստատությունները մնան համատեղ նախագիծ չունեցի:

Կարելի է նաև արդեն բավական հեղինակավոր ճամբարների ծրագիրը: 2017 թվականի ձմռան և ամառվա ծրագրերը 10 հազար երեխաների համար էին նախատեսված, որոնց մեծ մասն արդեն օգտվել է պետության կողմից կազմակերպված նշյալ ճամբարային ծառայություններից: Ներկայիս փուլը նախատեսված է յոթերորդ, ութերորդ և իններորդ դասարանների սոցիալական տարբեր խմբերի աշակերտների համար: Վրաստանի տարբեր տարածաշրջաններում տեղակայված ճամբարների ծրագրերը կոչված են խթանելու աշակերտների սոցիալական ինտեգրմանը, առողջ ապրելակերպի մասնագիտացմանը, հայրենասիրական ոգու բարձրացմանը, Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների ինտեգրմանը: Շատ մեծ է Մանավիի ռազմական բազայի և Քութայիսի կուրսանտների ճեմարանում զետեղված ճամբարների պահանջարկը, որն իրականացվում է Վրաստանի պաշտպանության նախարարության ու երիտասարդության ազգային կենտրոնի կողմից: Ապագայում նախատեսվում են մի քանի անգամ մեծացնել այս ծրագրի մասնակիցների թիվը:

Ի՞նչ նորություններ են 2017 թվականի ուսումնական տարվա սկզբից ծրագրվում Վրաստանի դպրոցներում...

- 2017 թվականի հոկտեմբերից դպրոցներում կսկսվի նոր ծրագիր՝ աշխատանքային հմտությունների զարգացման նախագիծ, որը կիրականացվի դպրոցի բազայի հիման վրա՝ մասնագիտական քոլեջների և դպրոցների համագործակցությամբ: Դա տարբեր մասնագիտական ուղղվածության թեմատիկ մոդուլների ուսուցում է՝ ըստ կոնկրետ դպրոցի պահանջարկի, կամ ժամանակակից աշխատանքի ուսուցման դաս: Դպրոցներում կստեղծվի նվազագույն բազա, որտեղ բազային աստիճանի աշակերտների համար, իրենց հետաքրքրող մասնագիտության շուրջ, հիմնական հմտություններ ձեռք բերելու համար գործնական դասեր կանցկացվեն: Մինչ այժմ դպրոցներն ու մասնագիտական հաստատությունները մնան համատեղ նախագիծ չունեցի:

Նույնպես, նոր ուսումնական տարվանից էլ ավելի լայնածավալ կդառնա դպրոցական-կրթական էքսկուրսիաների նախագիծը, որը կրկին կֆինանսավորվի: Ընդլայնվում է այն վայրերի ցանկը, որտեղ կարելի է կազմակերպել էքսկուրսիաներ: Թանգարաններին կավելանան աշխարհագրորեն հետաքրքիր, պատմական վայրեր, ազ-



գային զբոսայգիներ, արգելանոցներ և այլն:

Մի քանի ամիս առաջ՝ Կրթության և գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան խոսում էր դասագրքերի բեռնաթափման մասին, այս առումով ի՞նչ նորություններ կան:

- Ինչպես գիտեք, նախարարությունն արդեն հայտարարել է 1-6-րդ դասարանների դասագրքերի ստեղծման մրցույթ: Նոր դասագրքերը 2018 թվականի սեպտեմբերից կմտնեն դպրոց: Այս ուղղությամբ եւս երկու կարելի է նորություն ունենք. առաջինը՝ դասագրքերը էապես բարելավված կլինեն ըստ բովանդակության, քանի որ ծրագրերը բեռնաթափվել են, և գնահատումը կլինի ավելի բազմակողմանի չափանիշներով: Կարելի է, որ դասագրքերի գնահատման գործընթացին առաջին անգամ ներգրավված կլինի հասարակությունը. հեղինակների կողմից ներկայացված դասագրքերի նախագծերը կտեղադրվեն նախարարության կայքէջում և հասանելի կլինեն բոլոր շահագրգիռ անձանց, որոնք կկարողանան իրենց նշումները, առաջարկություններն ու գնահատականը ներկայացնել: Այս ամենը հնարավորություն կտա, որ 1-6-րդ դասարանների աշակերտներին 2018 թվականի սեպտեմբերից ավելի բարձրորակ դասագրքեր առաջարկեն: Կարելի է նաև նոր դասագրքերի տեխնիկական բնութագրիչները, մասնավորապես՝ կրթական կշիռը, թուղթն ու տառատեսակը՝ ավելի լավ, գույները, նկարազարդումները և տեքստի դասավորվածությունը ընկալման տեսանկյունից՝ արդյունավետ, քանի որ այս ուղղությամբ, հոգեբանների և առողջապահության փորձագետների համագործակցությամբ, գնահատման բավական խիստ չափանիշներ են մշակվել:

Նախարարը նաև ուշադրություն դարձրեց դասագրքերի էլեկտրոնային տարբերակներին...

- Պայուսակի ծանրության խնդիրը ապագայում աշակերտներին պակաս կմտահոգի, քանի որ նորություն է նաև դասագրքերի էլեկտրոնային տարբերակների ստեղ-

ծումը և տեղադրումը՝ ինչպես աշակերտների նոութբուքներում, այնպես էլ նախարարության կայքում, որպեսզի բոլոր աշակերտների համար հասանելի լինեն: Սակայն, լրիվությամբ էլեկտրոնային դասագրքերի անցնելը, հատկապես տարրական դասարաններում, խորհուրդ չի տրվում: Յուրաքանչյուր ուսուցիչ այնպես պետք է կարգավորի այս հարցը, որ աշակերտներն ունենան փոխարինման հնարավորություն և ոչ թե ամեն օր ստիպված լինեն ծանրաբեռնված պայուսակով տեղաշարժվել: Էլեկտրոնային տարբերակները, զուգահեռաբար, կպատրաստվեն և 2018-2019 ուսումնական տարվանից կբեռնվեն:

Հասարակության որոշ խմբերի քննադատությանը արժանացավ դպրոցներում նոր «Ե» և հասարակություն» առարկայի ավելացումը, այս փուլում ի՞նչ է կատարվում:

- Աղմուկը, որը հասարակության մեջ այս առարկայի շուրջ ստեղծվեց, կապված էր ոչ թե առարկայի բովանդակության հետ, այլ այն կասկածների, որ առարկայից այն կողմ ինչ-որ բան կա... Ով այս առարկայի չափորոշիչը կարողացել է, համոզվել է նրանում, որ առարկայում շատ կարելի է թեմաներ են ընդգրկված, այնպիսի հարցեր, ինչպես՝ իմ ընտանիքը, իմ դպրոցը, իմ պետությունը, ինչպես՝ պահպանել հիգիենա և առողջ լինել, ինչպես՝ պահպանել ընտանեկան ռեսուրսները, ինչպես՝ պահպանել երթևեկության կանոնները փողոցում և այլն: Այս առարկան երեխաներին, նրանց հասակի համեմատ, տալիս է տեղեկություն փարկված հարցերի շուրջ:

Յեղիցակները դեռ չեն ներկայացրել դասագրքերը: Նշյալ առարկայի դասագրքերը եւս մրցույթի կարգով կընտրվեն: Ինչպես ասացի, արդեն հայտարարված է մրցույթ: Դասագրքի նախագիծը կզետեղվի նախարարության կայքէջում և կլինի ընդհանուր գնահատման թեմա: Բոլոր շահագրգիռ անձինք կարող են նախապես, մինչև գրիֆ շնորհվելը, ծանոթանալ բովանդակությանն ու առաջադրել սեփական գնահատականը:

ԹԵՆ ԲԵԺՏՆԱՇՎԻԼ



ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«ԲԱՑ ԴՐՆԵՐԻ ՕՐԵՐ» ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Օգոստոսի 14-18-ին, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը հարկատուներին կներկայացնի Վրաստանի հարկային և քրեական օրենսգրքերում կատարած փոփոխությունները:

Բաթումիում, Քութայիսիում, Չեստափոնիում, Ռուսթավիում, Թելավիում, Գուրջաանիում, Ախալցխիում, Ախալքալաքիում, Ջուզգիդիում, Փոթիում,

Օգուրգեթիում, Գորիում և Մառնեուլիում «Բաց դռների օր» անվանմամբ կանցկացվեն հանդիպումներ: Միջոցառման շրջանակներում եկա-

մուտների ծառայության ներկայացուցիչները հարկատուների համար հարցուկատասխանի կարգով, կանցկացնեն Վրաստանի հարկային և քրեական օրենսգրքերում կատարված փոփոխությունների շնորհանդեսը: Հարկատուներին կտրվի սպառիչ տեղեկատվություն օրենսգրքերում իրականացված բոլոր

փոփոխությունների, համակարգում ներդրած նորամուծությունների վերաբերյալ:

«Բաց դռների օրվան» ներկա գտնվելու համար, հարկատուները կարող են նախօրոք գրանցվել ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարթակում:

«ՍԱԴԱԽԼՈ» ՍԱՐՄԱՆԱՅԻՆ ԱՆՑՈՒՄԱԿԵՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԶՅՈՉԱԿԱԳՐՎԱԾ ՄԻԳԱՐԵԹ

Օգոստոսի 8-9-ին, Վրաստան-Հայաստան սահմանային «Սադախլո-ավտոմոբիլային» անցակետում, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները կամիսեցին ապօրինաբար Վրաստան սիգարետ ներբերելու փաստը: Ընդհանուր առմամբ, 4000 գլանակ սիգարետ մաքսայինները հայտնաբերեցին Հայաստանի քաղաքացիներ Մ.Կ.-ի և Ս.Բ.-ի

մեքենաներում՝ հատուկ պատրաստած գաղտնարանում և ուղեբեռում: Վրաստանի հարկային օրենսգրքի 289 հոդվածի 14-րդ մասի համաձայն, իրավախախտում թույլ տված անձանց

սահմանվել է հազարական լարիի դրամական տուգանք, ապօրինի ապրանքաբանակությունը առգրավվել է: **ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

սահմանվել է հազարական լարիի դրամական տուգանք, ապօրինի ապրանքաբանակությունը առգրավվել է: **ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**